ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 59 66 59, քարտուղարություն հեռ.՝ 59 61 25

№ 2/4-2-1020 «03» 04 2015թ.

Ձեր

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար պարոն Դավիթ Հարությունյանին

Հարգելի պարոն Հարությունյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2015 թվականի մարտի 25-ի թիվ 02/12.11/4648-15 հանձնարարականի՝ Ձեզ է ներկայացվում ՀՀ ոստիկանությունում հանրային ծառայությունների բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև նշված ոլորտի բարելավումների վերաբերյալ առաջարկություններ:

Առդիր՝ «10» թերթից:

Հարգանքով՝
Գեներալ-լեյտենանտ ***Վլադիմիր Գասպարյան***

Հ.Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴ Ս
Մուտք թիվ 016-10620
07 04 2015

Տ ե ղ ե կ ա տ վ ու թ յ ու ն
ՀՀ ոստիկանությունում հանրային ծառայությունների բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ

<u>ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության</u> ստորաբաժանումների կողմից մատուցվող հանրային ծառայությունների բարելավման ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ:

1. 2012 թվականի հունիսի 1-ից գործարկվել և 2014 թվականի հունվարի մեկից գրեթե ամբողջ ծավալով անցում է կատարվել նույնականացման քարտերի և կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրային համակարգի: Բացի այն, որ ներդրված փաստաթղթային համակարգը համապատասխանեցվել է միջազգային չափանիշներին, այն հնարավորություն է տալիս անձը հաստատող փաստաթուղթ ստանալու համար դիմել ցանկացած անձնագրային ծառայություն՝ անկախ անձի բնակության վայրից (հին նմուշի անձնագիր ստանալու համար անձը իրավունք ուներ դիմել բնակության վայրի անձնագրային ծառայություն):

2. 2012 թվականի հունիսի 1-ից հանրապետության ողջ տարածքով բնակչության պետական ռեգիստրի բազայի հենքի վրա ներդրվել է հանրային ծառայությունների համարանիշերի համակարգը (այն փոխարինում է սոցիալական ապահովության քարտերի համակարգին): Նախկինում սոցիալական ապահովության քարտերը ձևավորվում էին մեկ կենտրոնից՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան ստորաբաժանումում: Մարզերում դիմում ներկայացրած անձինք սոցիալական ապահովության քարտ ստանում էին երբեմն շաբաթներ անց (կենտրոնում տպագրված սոցիալական ապահովության քարտերը առաքվում էին մարզեր): Համակարգային բարեփոխումից հետո հանրային ծառայությունների համարանիշը տրվում է տարածքային անձնագրային ծառայության կողմից՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում: Բացի այդ, նույնականացման քարտ ունեցող անձանց հանրային ծառայությունների համարանիշը ամրագրվում է նշված փաստաթղթում:

3. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում 2013 թվականի հունիսի 19-ին կատարված փոփոխությամբ քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումների քննարկման համար նախատեսված 1 տարյա ժամկետը փոխարինվել է 6 ամսյա ժամկետով:

4. ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1522-Ն որոշմամբ հաստակեցվել են ՀՀ քաղաքացիություն ստանալու և դադարեցնելու կապակցությամբ այլ պետական մարմիններ նյութերը քննարկման ուղարկելու, համապատասխան կարծիքներ ստանալու և վերջնական ցուցակը ՀՀ Նախագահի աշխատակազմ ներկայացնելու կարգը և ժամկետները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազգությամբ հայերը ՀՀ քաղաքացիություն ստանում են պարզեցված ընթացակարգով, նույն որոշմամբ սահմանվել է ազգությամբ հայ լինելը հավաստող փաստաթղթերի ցանկը:

5. ՀՀ քաղաքացիություն ստանալու և քաղաքացիությունը դադարեցնելու դիմումների ընթացքի վերաբերյալ (դիմումները վարչություն մուտքագրվելուց հետո, դիմումների վերաբերյալ եզրակացությունները Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ ուղարկվելուց հետո, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու (դադարեցնելու) մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրը վարչությունում ստացվելուց հետո) տեղեկությունները 3-օրյա ժամկետում ուղարկվում են դիմումատուի էլեկտրոնային փոստի հասցեով և (կամ) բջջային հեռախոսահամարով, եթե դիմումատուն դիմում հարցաթերթիկում լրացրել է էլ. փոստի հասցեն կամ բջջային հեռախոսահամարը: Ընդ որում, ծանուցումները ուղարկվում են բոլոր այն դեպքերում, երբ նույնիսկ անձը գտնվում (բնակվում) է ՀՀ տարածքից դուրս: Եթե դիմումատուն լրացրել է 2 տեղեկությունները միաժամանակ, ծանուցումները ուղարկվում են և հեռախոսահամարին, և էլ. փոստի հասցեին:

6. Բնակչության պետական ռեգիստրի համակարգի կատարելագործման նպատակով շարունակաբար ձեռնարկվում են համալիր միջոցառումներ: Մասնավորապես, ռեգիստրի ժամանակին և պատշաճ ձևով վարման, ինչպես նաև ռեգիստրի ճշտության ապահովման նպատակով ներդրվել է քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունում կատարվող գրանցումների (**ծնված անձանց և մահացածների**) վերաբերյալ տվյալների ավտոմատ եղանակով բնակչության պետական ռեգիստրի տվյալների բազայում արտացոլման և համակարգում ուղղումների կատարման տեխնիկական համակարգ: Արդյունքում ՔԿԱԳ մարմինը գրանցելով երեխայի ծնունդը՝ տեղում ավտոմատ եղանակով բնակչության պետական ռեգիստրի բազա է մուտքագրում հաշվառման հասցեն: Ծնողը այլևս չի ներկայանում տարածքային անձնագրային ծառայություն երեխային ըստ բնակության վայրի հաշվառելու համար:

7. Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհված և դեռևս Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր չստացած անձանց համար սահմանվել է Հայաստանի Հանրապետություն առանց մուտքի վիզայի այցելության ռեժիմ: Այսինքն, այն դեպքում, երբ ՀՀ Նախագահի հրամանգրով շնորհվում է ՀՀ քաղաքացիություն, տվյալները էլեկտրոնային եղանակով ԱՎՎ-ից հաղորդվում են սահմանային անցման կետեր՝ ՍԷԿՏ համակարգի միջոցով: Համակարգը հնարավորություն է ընձեռում դեռևս ՀՀ քաղաքացու անձնագիր չստացած անձանց ՀՀ մուտք գործելը թույլատրել առանց մուտքի վիզա ստանալու և համապատասխան վճարում կատարելու:

8. Համակարգում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով սահմանային անցման կետերում շուրջօրյա ռեժիմով, այդ թվում ոչ աշխատանքային օրերին, ստեղծվել է հնարավորություն անձնագրում օտարերկրյա պետությունում վավերականության նշում կատարելու և անձնագրի վավերականության ժամկետի երկարաձգման համար:

9. 2013 թվականի սեպտեմբեր ամսին շահագործման է հանձնվել Անձնագրային և վիզաների վարչության նոր վարչական շենքը: Նոր պայմանները հնարավորություն են ընձեռել առավել որակյալ ծառայություն մատուցել քաղաքացիներին:

10. 2014 թվականի սեպտեմբեր ամսից Անձնագրային և վիզաների վարչությունում գործում է SKYPE ծառայությունը, որի միջոցով շաբաթը մեկ անգամ ոլորտին վերաբերող հարցերի կապակցությամբ պատասխաններ են տրվում ինչպես օտարերկրյա պետություններում, այնպես էլ ՀՀ-ում գտնվող քաղաքացիներին:

Ոլորտի բարելավման վերաբերյալ առաջարկություն:

Հաշվի առնելով այն, որ SKYPE ծառայության միջոցով քաղաքացիներին տեղեկատվություն տրամադրելու, առաջացած խնդիրներին արագ արձագանքելու գործընթացը արդյունավետորեն կազմակերպվում և իրականացվում է, նախատեսվում է նշված գաղափարի հենքի վրա իրականացնել նաև հանրային ծառայության որակի բարելավմանն ուղղված մեկ այլ միջոցառում: Պրակտիկայում լինում են դեպքեր, երբ քաղաքացին գտնվելով օտարերկրյա պետությունում, որոշակի գործողություններ կատարելու համար ուղարկում է գրավոր լիազորագիր (շատ դեպքերում նոտարական վավերացմամբ), կատարելով զգալի ծախսեր, այդ թվում նաև ցանկալի արդյունքի հասնելու համար կորցնելով ժամանակ: Երբեմն լինում են դեպքեր, երբ քաղաքացին ցանկանում է որոշակի գործողություններ կատարել, սակայն լիազորագրում հստակ նշված չի լինում լիազորության սահմանը կամ լիազորագրում նշված գործողության պատշաճ կատարման համար պահանջվում է դիմել մեկ այլ իրավասու մարմին կամ վարչական վարույթի բազմակողմանի և օբյեկտիվ իրականացման համար պահանջվում է անցկացնել վարչական լսումներ և որոշ հարցերի պարզաբանման համար տեղեկություններ ստանալ անմիջապես դիմումատուից, սակայն վերջինս գտնվում է օտարերկրյա պետությունում:

Այս ամենից զերծ մնալու համար նախատեսվում է **ապացույցների հավաքման, լիազորությունների հաստատման, վարչական լսումներ իրականացնելու** գործընթացում կիրառել SKYPE ծառայությունը: Այն կարող է արդյունավետորեն կիրառվել, քանի որ անձնագրային ծառայության կողմից անմիջապես տեղում հնարավոր կլինի իրականացնել անձի նույնականացումը՝ դիմող քաղաքացու արտաքին տվյալները նույնականացնելով բնակչության պետական ռեգիստրի բազայում կամ անձնագրային ծառայությունում առկա լուսանկարի հետ:

Որպես լիազորությունը հավաստող փաստաթուղթ, վարչական լսման արձանագրություն և այլ ապացույց նախատեսվում է վարչական վարույթի նյութերում պահպանել տեսաձայնագրությունը՝ ամրագրված էլեկտրոնային կրիչի վրա:

Վերը նշվածը զգալիորեն կբարձրացնի հանրային ծառայության որակը, կնվազեցնի քաղաքացիների կողմից որևէ գործողություն կատարելու համար ծախսվող գումարները, ցանկալի արդյունքի հասնելու համար կպահանջվի ավելի քիչ ժամանակ, կբարելավվի մատուցվող ծառայության արդյունավետությունը (լինում են դեպքեր, երբ վարչական վարույթի

ընթացքում որևէ հարցի պարզաբանման համար վարչական մարմնի և քաղաքացու միջև իրականացվում է մի քանի փոխադարձ թղթակցություն՝ շատ դեպքերում տևելով տարիներ):

<u>ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության</u> ստորաբաժանումների կողմից մատուցվող հանրային ծառայությունների բարելավման ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես հաշվառման-քննական ստորաբաժանումների գործունեության ոլորտում 2010 թվականին սկսված և 2012 թվականի ապրիլի 2-ից գործող փոփոխություններ: Մասնավորապես.

1. 2010 թվականի հոկտեմբերի 16-ից գործում է տրանսպորտային միջոցների նկատմամբ սեփականության, ինչպես նաև գրավի ու լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքների պետական գրանցման ինստիտուտը, որով վերջ է դրվել տարիներ ի վեր շարունակվող «գլխավոր լիազորագրերով» կամ առուվաճառքի պայմանագրերով առանց համապատասխան վերահաշվառման տրանսպորտային միջոցների օտարման գործընթացներին:

2. 2012 թվականի ապրիլի 2-ին շահագործման հանձնվեց Երևանի հաշվառման-քննական բաժնի նոր վարչական շենքը և քննական ավտոդրոմը և նույն օրն էլ գործարկվեց տրանսպորտային միջոցների գրանցման, հաշվառման և վարորդական վկայականների հատկացման նոր միասնական համակարգչային ծրագիրն ու ցանցը (էլեկտրոնային ռեգիստրը), մասնավորապես, իրականացվեցին հետևյալ միջոցառումները.

1) տրանսպորտային միջոցների պետական գրանցումը, հաշվառումը և վարորդական վկայականների հատկացումն իրականացվում է հոսքագծի եղանակով՝ «զննության կայան-տուրքերի և վճարների վճարման վայր-սպասարկման սրահ-փաստաթղթերի տպագրման և հատկացման սրահ», որը հնարավորություն տվեց կրճատել գրանցման և հաշվառման գործողությունների կատարման ժամկետը՝ նախկին մի քանի ժամից մինչև 20-30 րոպե, իսկ նոր տեղադրված պլաստիկ քարտի տեսքի հաշվառման վկայագրերի տպագրման սարքերը հնարավորություն տվեցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում հատկացնել տրասնպորտային միջոցի հաշվառման վկայագիր, իսկ Երևանի հաշվառման-քննական բաժնում հաշվառման համարանիշերի տպագրման սարքն էլ՝ ցանկալի կամ մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի ընտրության դեպքում նույն պահին հատկացնել այդ համարանիշերի վահանակները:

2) տրանսպորտային միջոցի պետական գրանցումից և հաշվառումից հանելու առանձին գործընթաց այլևս չի իրականացվում, փոխարենը նոր սեփականատիրոջ անվամբ գրանցման հետ միաժամանակ տրանսպորտային միջոցն ավտոմատ հանվում է նախկին սեփականատիրոջ անվամբ գրանցումից և հաշվառումից,

3) հանվել է տրանսպորտային միջոցի գրանցումը և հաշվառումը սեփականատիրոջ հաշվառման վայրի տարածքային ստորաբաժանումում իրականացնելու պարտադիր պահանջը,

և ցանկացած ստորաբաժանումում հնարավոր է իրականացնել ցանկացած վայրում հաշվառված անձի տրանսպորտային միջոցի գրանցում և հաշվառում, ինչի արդյունքում՝ վերանում է տարանցիկ համարանիշերի համար սահմանված 3.000 դրամ տուրք վճարելու անհրաժեշտությունը և քաղաքացու կողմից ծախսվող ավելորդ ժամանակը,

4) հանվել է տրանսպորտային միջոցի օտարման կապակցությամբ գրանցման և հաշվառման գործողություն կատարելու ժամանակ նախկին սեփականատիրոջ կողմից ապահովագրական (ԱՊՊԱ) պայմանագիր կնքած լինելու հանգամանքը պարզելու և որպես դրա հետևանք՝ ապահովագրական պայմանագիր չունենալու դեպքում վարչական վարույթ իրականացնելու պարտականությունը,

5) հանվել է տրանսպորտային միջոցի գրանցման, հաշվառման և վարորդական վկայական ստանալու համար գրավոր դիմում ներկայացնելու պահանջը, փոխարենը համապատասխան պահանջվող փաստաթղթեր ներկայացնելը, ինչպես նաև համակարգչային տեխնիկայով նկարահանվելը փաստելու է քաղաքացու դիմելը վարչական մարմին,

6) հանվել է տրանսպորտային միջոցի շարժիչի համարը պարզելու և հաշվառման վկայագրում լրացնելու պահանջը,

7) տրանսպորտային միջոցի օտարման հասարակ գրավոր պայմանագիրը կազմվում է ավտոմատ՝ համակարգ մուտքագրված տվյալների հիման վրա,

8) փոխվել է տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի հատկացման աճուրդային կարգը, և այդ համարանիշերը հատկացվում են սահմանված գնի վճարման դիմաց, այսինքն տրանսպորտային միջոցի հաշվառման ժամանակ սեփականատերը հնարավորություն ունի ընտրել ցանկացած ազատ համարանիշ, և տրանսպորտային միջոցը նույն պահին հաշվառվում է այդ համարանիշով (Երևանի հաշվառման-քննական բաժնում վճարովի համարանիշերի պատրաստումը ևս իրականացվում է տեղում): Տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի հատկացման կարգի փոփոխությունը պայմանավորված է համարանիշերի հատկացման մեխանիզմները պարզեցնելու անհրաժեշտությամբ, քանի որ աճուրդային կարգը ժամանակատար գործընթաց էր և պահանջում էր լրացուցիչ գործողությունների իրականցում ինչպես տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ, այնպես էլ Ճանապարհային ոստիկանության կողմից: Իսկ ուղղակի վաճառքի դեպքում տրանսպորտային միջոցը հաշվառելու պահին սեփականատերը հնարավորություն է ունենում կատարել համարանիշի ընտրություն և ձեռք բերել համապատասխան համարանիշերով տրանսպորտային միջոցը հաշվառելու իրավունք՝ առանց սպասելու աճուրդի անցկացման օրվան:

9) բոլոր ստորաբաժանումներում տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը և վարորդական վկայականը տպագրվում և հատկացվում է տեղում՝ անմիջապես գործողությունը կատարելուց հետո,

10) բոլոր ստորաբաժանումներում շահագործման են հանձնվել տեսական քննությունների ընդունման համար նախատեսված համակարգչային քննական սենյակներ, որոնք հնարավորություն են տվել որակավորման տեսական քննությունները ընդունել համակարգիչներով՝ բարձրացնելով քննությունների ընդունման օբյեկտիվությունը: Որակավորման տեսական քննությունների ընդունման գործընթացը առավել թափանցիկ դարձնելու համար, քննության ընթացքը ցուցադրվում է սպասասրահում տեղադրված էկրանին: Վարորդական վկայական ստանալու գործնական քննությունը, նախկին երկու փուլի (ավտոդրոմում և ճանապարհային երթևեկության իրական պայմաններում) փոխարեն, անցկացվում է մեկ փուլով (միայն ավտոդրոմում կամ ավտոհրապարակում, իսկ մինչև քննական մարմինները դրանցով ապահովելը՝ ճանապարհային երթևեկության իրական պայմաններում): Առավել պարզեցվել և հստակեցվել է որակավորման քննությունների ընդունման, վարորդական վկայականների և կորցրած վարորդական վկայականների փոխարեն նորերի հատկացման, օտարերկրյա պետություններում ստացած վարորդական վկայականների փոխանակման, դրանց կրկնօրինակների հատկացման գործընթացը: Հստակ սահմանվել են այն դեպքերը, որոնց դեպքում վարորդները պետք է հանձնեն որակավորման քննություններ,

11) որևէ կարգի վարորդական վկայական ունեցող անձը, «A», «B», «C» կարգերից կամ «A1», «B1», «C1» ենթակարգերից որևէ նոր կարգ ստանալու համար այլևս չի հանձնում տեսական քննությունը, և վարորդական վկայականը ստանում է միայն գործնական քննության արդյունքների հիման վրա, ինչի արդյունքում՝ վերացել է տեսական քննության համար սահմանված 3.000 դրամ տուրք վճարելու անհրաժեշտությունը,

12) «B» կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու համար գործնական քննությունը կարող է ընդունվել նաև ավտոմատ փոխհաղորդակով տրանսպորտային միջոցով և տրվել այդպիսի տրանսպորտային միջոց վարելու իրավունք,

13) ներդրվել է տեսական քննության հետ միաժամանակ հոգեբանական թեստ հանձնելու պահանջ, որը փոխարինում է քաղաքացու տվյալները հոգեբուժական բժշկական հաստատությունների կողմից տրված տվյալների հետ համեմատելու գործընթացին,

14) գործողության մեջ են դրվել միջազգային համաձայնագրերին ու ստանդարտներին համապատասխան վարորդական վկայականներ: Հանվեց քաղաքացիներից վարորդական վկայականների փոխանակման համար ավելորդ քննությունների ընդունման պահանջը: Վարորդական վկայականների պատրաստման և հաշվառման համակարգչային ծրագրերի ներդրումից հետո, նոր համակարգով վարորդական վկայական ստացողներից բացառվեց վարորդական վկայական ստացած լինելու վերաբերյալ փաստաթուղթ ներկայացնելու պահանջը՝ հնարավորություն տալով վարորդներին իրենց վարորդական վկայականները փոխանակել և ստանալ դրանց կրկնօրինակները նվազագույն ժամանակում: Վիեննայի 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայով սահմանված պահանջներին համապատասխանող վարորդական վկայականները, անկախ տրման երկրից

կամ ներկայացնող անձի քաղաքացիությունից փոխանակվում են առանց որակավորման քննություններ հանձնելու,

15) վարորդական վկայական հատկացնելիս (փոխանակելիս կամ կորած վկայականի կրկնօրինակը տրամադրելիս) քննական մարմնի ղեկավարի կողմից գրավոր որոշում չի ընդունվում, այլ վարորդական վկայականը կատարում է վարչական ակտի դեր: Գրավոր որոշում ընդունվում է միայն վարորդական վկայական տալը, փոխանակելը կամ կորած վկայականի կրկնօրինակ տալը մերժելու դեպքում,

16) տրանսպորտային միջոցի գրանցման, հաշվառման և վարորդական վկայական ստանալու բոլոր գործերը և մատյանները վարվում են էլեկտրոնային եղանակով՝ հաշվառման շտեմարանների տեսքով, և մոտ 90%-ով նվազել է արխիվացման ենթակա փաստաթղթերի քանակը, իսկ արխիվացումն էլ կատարվում է էլեկտրոնային եղանակով:

Վերը նշված միջոցառումների իրականացմամբ լուծվել են նախկինում անլուծելի թվացող և քաղաքացիների դժգոհությունը հարուցող մի շարք խնդիրներ, որոնցից առավել հատկանշական են.

1) Երևան քաղաքում գործող նախկին երեք ստորաբաժանումներում գոյացող անվերջ հերթերի վերանալը,

2) տրանսպորտային միջոցների գրանցման, հաշվառման կամ վարորդական վկայականի հատկացման համար անձինք հնարավորություն ստացան դիմել ցանկացած տարածքային ստորաբաժանում՝ անկախ իրենց կամ տրանսպորտային միջոցի հաշվառման վայրից,

3) տրանսպորտային միջոցների օտարման դեպքում սեփականության իրավունքի գրանցման և հաշվառման գործողությունները կատարվում են մեկ ստորաբաժանման կողմից (նախկինում եթե օտարողը և գնորդը հաշվառված էին տարբեր ստորաբաժանումների կողմից սպասարկվող տարածքներում տրանսպորտային միջոցը հաշվառումից հանվում էր օտարողի հաշվառման վայրն սպասարկող, իսկ հաշվառումը՝ գնորդի հաշվառման վայրն սպասարկող ստորաբաժանման կողմից),

4) Երևան քաղաքում քննական ավտոդրոմը և քննական ավտոմոբիլներն ապահովեցին գործնական քննությունների անցկացման պատշաճ պայմաններ ինչպես քննություն հանձնողի, այնպես էլ ընդունողի համար,

5) տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի աճուրդային կարգով հատկացումը փոխարինվեց հաստատագրված գնով այդ համարանիշերի վաճառքով, ինչը հնարավորություն տվեց այդ համարանիշերը ձեռք բերել ավելի պարզեցված կարգով:

Փոփոխություններ կատարվեցին նաև կորած համարանիշերի հատկացման գործընթացում և ավտոմոբիլների սեփականատերերին հնարավորություն տրվեց զույգ համարանիշերից մեկի կորստյան դեպքում մեկ անգամ ստանալ կորած համարանիշի կրկնօրինակը: Այս փոփոխությունը լայն և դրական արձագանք ստացավ մասնավորապես մեծ պահանջարկ

ունեցող համարանիշերով ավտոմոբիլներ ունեցող անձանց շրջանում՝ գոնե մեկ անգամ բացառելով նրանց կողմից վճարված մեծ գումարների կորուստը:

Ոլորտի բարելավման վերաբերյալ առաջարկություն

Ճանապարհային ոստիկանության աշխատանքները կանոնակարգող իրավական ակտերի ժամանակակից ստանդարտներին համապատասխանեցումը հնարավորություն տվեց իրականացնել բազմաթիվ բարեփոխումներ, սակայն դեռևս առկա են բազմաթիվ տեխնիկական խնդիրներ, որոնց լուծումը կնպաստի քաղաքացիների սպասարկման որակի բարձրացման արդյունավետության վրա:

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության տարածքային հաշվառման-քննական ստորաբաժանումների վարչական շենքերի պայմանները դեռևս չեն բավարարում անհրաժեշտ պահանջներին և վերոհիշյալ հոսքագիծ ընթացակարգը գործում է ոչ լրիվ (բացառությամբ՝ Ճանապարհային ոստիկանության Երևան քաղաքի հաշվառման-քննական բաժնի), հնարավորություն չտալով քաղաքացիների սպասարկումը պահել պատշաճ մակարդակի վրա:

2015թ. ընթացքում նախատեսված է իրականացնել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Կոտայքի և Իջևանի հաշվառման-քննական ստորաբաժանումների վարչական շենքերի վերանորոգում (վերակառուցում), որը հնարավորություն կտա այդ ստորաբաժանումներում լիովին շահագործման հանձնել «զննության կայան-տուրքերի և վճարների վճարման վայր-սպասարկման սրահ-փաստաթղթերի տպագրման և հատկացման սրահ» հոսքագիծ ընթացակարգը, բարձրացնելով քաղաքացիների սպասարկման որակը և նվազեցնելով քաղաքացիների հաշվառման-քննական ստորաբաժանումում գտնվելու ժամանակը:

Քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու համար անհրաժեշտ ենք համարում, որ Ճանապարհային ոստիկանության բոլոր հաշվառման-քննական ստորաբաժանումները ունենան վարորդական գործնական քննությունների ընդունման ավտոդրոմ, որն էլ, իր հերթին պետք է կահավորված լինի վարորդի թեկնածուի կողմից կատարվող սխալների հայտնաբերման տեխնիկական միջոցներով: Այդպիսի տեխնիկական միջոցների կիրառումը վարորդական գործնական քննությունների ընդունման գործընթացի ժամանակ կբացառի գործնական քննություն ընդունող աշխատակցի կողմից քննության նկատմամբ սուբյեկտիվության դրսևորումը:

Բացի այդ, վարորդական գործնական քննությունների որակը բարձրացնելու համար, ճանապարհային բոլոր հաշվառման-քննական ստորաբաժանումներում որակավորման գործնական քննություններ ընդունելու համար ապագայում նախատեսվում է նաև քննական տրանսպորտային միջոցներ՝ առանձին կարգերի տրանսպորտային միջոցների գործնական վարումից քննություններ ընդունելու համար:

Նախատեսվում է նաև Ճանապարհային ոստիկանության տարածքային հաշվառման-քննական ստորաբաժանումների վարչական շենքերի մոդելային (Երևանի հաշվառման-քննական բաժնի օրինակով) վերակառուցում, ինչպես նաև քննական տրանսպորտային միջոցներով կահավորում, որից հետո անհրաժեշտություն կառաջանա քննարկել նաև կազմ-հաստիքային փոփոխությունների հարցը:

<u>Պարեկային ծառայության մոդելի ներդրում -</u> Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի Գերակա խնդիրների շրջանակում Պարեկային ծառայության մոդելի ներդրման ուսումնասիրությունների կատարման ուղղությամբ 2014 թկականի ընթացքում իրականացվել են ՀՀ ոստիկանությունում պարեկային ծառայության նոր մոդելի ներդրման ուսումնասիրություններ, օտարերկրյա պետություններում կիրառվող փորձի վերլուծություն: Վերլուծությունների արդյունքում նախատեսվել է Երևան քաղաքում իրականացնել պարեկային ծառայության նոր մոդելի ստեղծմանն ուղղված պիլոտային ծրագիր՝ օգտագործելով պարեկապահակետային ծառայություն իրականացնող ստորաբաժանման, ինչպես նաև Ճանապարհային ոստիկանության պարեկային ուժերն ու միջոցները, որի նպատակը Երևան քաղաքում հասարակական կարգի և անվտանգության առավել օպերատիվ և արդյունավետ ապահովումն է:

<u>Հայաստանի Հանրապետությունում համայնքային ոստիկանության մոդելի ներդրում</u> - Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների շրջանակում կարևոր քայլերից մեկն է հանդիսանում համայնքային ոստիկանության ստեղծումը, որի հիմնական նպատակն է հասարակություն-ոստիկանություն սերտ համագործակցության ապահովումը, հասարակության մոտ ոստիկանության նկատմամբ ունեցած վստահության բարձրացումը, ինչպես նաև քաղաքացիներին ոստիկանական արագ և որակյալ ծառայությունների մատուցումը: Համայնքային ոստիկանության մոդելի ներդրումը ներկայիս զարգացող ոստիկանության համակարգում նաև պատմական անխուսափելի զարգացման փուլերից մեկն է, որի առաջնահերթությունը նաև այն է, որ իրենց ծառայողական պարտականությունների լիարժեք կատարման նպատակով ոստիկանները ձգտում են համագործակցել քաղաքացիների հետ՝ հանցագործությունների կանխարգելման, հանցավորության մակարդակի նվազեցման և հասարակական կարգի պահպանության աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար: Ոստիկանության կողմից սպասարկվող յուրաքանչյուր վարչական տարածքում առանձին ոստիկանական հենակետերի ստեղծումը ինքնանպատակ չէ, այլ այն պետք է նպաստի համայնքային ոստիկանության նպատակների իրագործմանը, իսկ համայնքային ոստիկանության ծառայությունը կազմակերպվում է այնպես, որ յուրաքանչյուր քաղաքացի ճանաչի և վստահի իր տարածքը սպասարկող ոստիկանին:

Հենակետերի միջոցով ապահովում են սերտ համագործակցությունը քաղաքացիների հետ: Երևան քաղաքում նախատեսված 40 հենակետերից, ներկայումս գործում են 11-ը, իսկ Հանրապետությունում առկա 875 գյուղական համայնքներից 761-ում գործում են համայնքային ոստիկանության աշխատասենյակներ:

Այսօր արդեն ՀՀ ոստիկանության գերատեսչական համակարգչային ցանցի միջոցով տարածքային բոլոր բաժինները միացվել են ցանցին եւ հնարավորություն է ստեղծվել տարածքային բաժիններից էլեկտրոնային եղանակով, մեկ միասնական համակարգի միջոցով ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստանալ և քաղաքացիներին տրամադրել տեղեկություններ: Քաղաքացիների խնդիրներին էլ ավելի ծանոթ լինելու, դրանց արագ արձագանքելու և քաղաքացիներին աջակցելու նպատակով համայնքներում ստեղծվել են և շարունակվում են ձևավորվել համայնքային խորհուրդներ:

Ոլորտի բարելավման վերաբերյալ առաջարկություն

Նախատեսվում է Հանրապետությունում 2015 թվականի ընթացքում ստեղծել 6 հենակետ:

ՀՀ ոստիկանություն